

ՊՈՒԼԵԱՐԻԱ

ՊԱՅՄԱՆՆԵՐ

Տարեկան 8 ձր.
Վեցամսեայ 4 ձր.

ԱՐՏՎՈՒՆԴԱՆ


Տարեկան 10 ձր.
Վեցամսեայ 5 ձր.

ԱՄԵՐԻԿԱ

Տարեկան 2 ձր.
Վեցամսեայ 1 ձր.

ԿԱՆԻՍԻԿ

ԾԱՆՈՒՑՄԱՆ ՏՈՂԸ
20 ՄԵՆ.



ԼՐԱԳԻՐ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՄԵՆ ՇԱՐԱԹ ՕՐԵՐ

rev. Pere G. Kalemkarian Michitaris
tengasee № 4
Vienne

ՀԱՄԱՐ

Rédaction du Journal

„Гравуник“

Varna

Редакция на

Вѣстникъ

„Иравуникъ“

Варна

Իրաւօրէնք եւ չին
տրուիր

“ՎԱՏ ՔԱՅԼԸ”

ՄԵՐ ԲԱՑ ԼՏՐՈՒԹԻՒՆԸ

Ռուսացի մեր համակիրներէն Ղարիպ-Ղուրպէթ իր վերջին թրդ թաղկութեամբ մեզ առիթ կուտայ անգամ մըն ալ վերադառնալու այն աններելի սխալին զոր անցեալ տարի գոհեցին Ռուսչուքի մէջ կարգ մը տեղացի ազգայիններ, հրաւիրելով կառավարութեան միջամտութիւնը մեր զուտ ազգային եկեղեցական գոհեցումն այսինքն թաղ խորհրդոյ ընտրութեան:

Ղարիպ-Ղուրպէթ լաւ ըրած էր որ այդ աններելի սխալը գործողներուն ինքնարդարացումի միակ առարկութիւնը մէջ տեղի ըրած էր որ բացոյց խոստովանութիւն սըն է:

Ահա այդ ինքնարդարացումի առարկութիւնը. «Երկրին օրէնքը վաւերական չի նկատել թաղականութեան ընտրութիւնը եթէ կառավարական պաշտօնէի մը չի կայութեան չէ կատարուած, եւ որովհետեւ եկեղեցին իր կալուածները ունի, որոնց հասոյթը գանձու համար երբեմն պատահական դժուարութեանց պարագային դատական իշխանութեանց պաշտպանութեան գիմելու պէտք կունենայ, ու եթէ վաւերական հանգամանքէ պուրկ լինի յայտարարելի թաղականութիւնը կըրնայ որ մը իրեն վստահուած եկեղեցւոյն շահերը վտանգելու, ուստի այս նկատմամբ առաջնորդուած հարկեցուցիչ կերպիւ պատկանեալ իշխանութեանց ղեկուցած էր ընտրութեան օրը և ժամը որպէսզի ընտրութեան օրի նաւորութեան հսկող պաշտօնեան ներկայ գտնուի:

Այս առարկութիւնը հիմէն սըխալ է. վտանգի պուրկար կառավարութիւնը միշտ ճանչցած է հոյ եկեղեցւոյ անկասկածելի և Պոլսոյ Ազգ. Պատրիարքարանի վերին իրաւասութիւնը Պուլկարիոյ բոլոր հայ եկեղեցիներուն վրայ: Այնպիսի որ եթէ պատահի որ օր մը դատի մը պարագային, եթէ դատարան չուզէ ճանչնալ

ներկայից թաղականութիւնը, բուական է այդ դատարանին մատուցանել Պատրիարքարանի պաշտօնական վաւերագիրը իր թարգմանութեամբ, եթէ դատարանը յամառի այդ ալ չճանչնալ շատ հեշտ է մի քիչ ժամանակ կորսնցնելով—այն ալ միայն մէկ անգամի համար—դիմում ընել Պատրիարքարանին և նախարարութեան, որով ձեռք բերուելիք արդիւնքը ապահովագրէս նըպատաւոր պիտի ըլլայ թաղականութեան:

Այս մասին պուրկար կառավարութեան բախցակամ տրամադրութիւնը անգամ մըն ալ ապացուցուեցաւ դեռ քանի մը ամիս առաջ, Սիւլէյմի նոր թաղականներու ընտրութեան խընդրով. Հոն ալ կարգ մը մարդիկ, յետին մտքով, կառավարութեան միջամտութիւնը հրաւիրած էին, և տեղւոյն կառավարութիւնը պաշտօնեաներ զրկած էր ընտրութիւնը կատարել տալու համար: Բայց Պատրիարքարանի կողմէ վրայ հասնող Արթ. Տէր Յովհան աւագ քահանայ Մանգալուներին մէկ բերանացի բողոքը նահանգապետի փոխանորդին՝ բուական եղաւ նախարարութեան հրաման հասնելուն, թէ «Պատրիարքարանի պաշտօնէին բողոքին գոհացում տրուի և տեղւոյն կառավարութիւնը չը միջամտէ Հայոց թաղականներու ընտրութեան այլ այդ ընտրութիւնը կատարուի Պատրիարքարանի հրահանգին համաձայն»: Եւ կառարուեցաւ ճիշդ այդպէս ու միայն ընտրութեան արդիւնքը հաղորդուեցաւ կառավարութեան:

Ռուսչուքի մէջ գործուած աններելի սխալը արդարացնելու նպատակաւ յորինուած վերի առարկութեան ոչնչութիւնը այսպէս ապացուցանել յետոյ չենք կարծեր որ պէտք մտայ հոս բացատրելու թէ մեր զուտ ազգային եկեղեցական գործերու մէջ օտարին միջամտութիւնը հրաւիրելը ապագային ո՞րչափ աղիտաբեր հետեանքներ կրնայ ունենալ: Այս և ասոր նման սխալներ էին որ պատահաւ եղան Լեհաստանի թը

րանսիւլանիոյ և Հունգարիոյ մէջ բերաւ որ և ընտրի հայ գաղթականութեանց կորուստին ու անէացման: Ահա այս պարագան մեզ տեսակէտ ունենալով էր որ մենք «Վատ քայլ» անուանեցինք Ռուսչուքի մէջ ոմանց կողմէ գործուած այն աններելի սխալը: Մեր այս որակումը ծանր նկատողները պիտի կրնան զայն «Լաւ քայլ» անուանել կամ անքննադատելի գտնել: Եթէ այն, թող հաճին հրապարակ գալ և պարզել իրենց դատելակերպը. եթէ յաջողին արդարացնել այդ քայլը հասարակաց դատաստանին և ազգին խընդին ուղեւ, այն ատեն մենք պատրաստ պիտի ըլլանք մեր խօսքը ետ առնելու: Բաց են մեր սիւնակները, թող հրամեն:

Աւելորդ է յիշել թէ այդ քայլը առնողները Ռուսչուքի մէջ միայն մէկ քանի անձեր եղած են. մենք ընաւ նպատակ ունեցած չենք տեղւոյն պատուական հայութիւնը կասկածելի ցոյց տալու, մեր գրածէն ալ այդ տեսակ բան մը չհասկցուիր. բայց զայն խեղաթիւ ուղները և մասնաւորէն բնդհանուրը հետեցնողները կամ յետին մտքերով տողորուածներ են կամ այդ վատ քայլին մեղաւորները: Եւ այդպիսինքն ոչ վատաբար պոքքօքը և ոչ ալ չարախօսութիւնները կրնան մեզ սեին ճերմակ և վատին բարի ըսել տալ. միայն ճշմարտութեան և անխաղախ տրամաբանութեան առջև է որ մենք կը խոնարհինք: Կը կրկնենք, թող հրապարակ հրամեն այդ քայլը արդարացնողները:

Յ. Պուրպիք

ՌՈՒՄԱՆԱՀԱՅԻ

Գոնթանցայէ յունուար 15 թուով մեզ ուղղուած նամակէ մը կը տեղեկանանք թէ տեղւոյն Պատ. Թաղ. Խորհուրդը ըստ սովորականին չքեզ պարահանգէս մը տուած է. ուր ներկայ գրտնուած են վսեմ. նահանգապետ, դատաւարաց տնօրէնները, Օսմանեան, Հելլենական և Աւստրիական հիւպատոսները և ուրիշ

երեւելի անձնաւորութիւններ. որոնք երեկոյթին կարգ ու սարքէն չափազանց գոհ մնալով, մեկնելու ատեն սրտագին շնորհակալութիւն յայտնած են: Այդ պարահանգէսէն զուտ հաւոյթ գոյացած է 2300 ֆր. չափ:

Նոյն նախագիւրը ուսմանութեամբ կ'աւետէ թէ Ազգային Մանկապարտէզը ի մօտոյ պիտի բացուի. նոր նախարարութիւնը ապահովագրէս պիտի տայ խնդրուած արտօնութիւնը:

Բացուելիք Մանկապարտէզին համար բոլոր նախնական չափաւոր ստիւթները տեսնուած են, նոյն իսկ վարժուհիները վարժուած: Այս մասին ժողովրդեան տրամադրութիւնն ալ շատ լաւ է:

Ռաւմանիոյ հայաբնակ քաղաքներէն միակն է Գոնթանցան, որ հաստատ եկամուտ կամ կալուած ընաւ չունենալով հանդերձ, տարեկան 10—12 հազար ֆր. կը ծախսէ եկեղեցւոյ և վարժարանի միջոցաւ ուրիշ շատ մը քաղաքներ 25—30,000 ֆ. եկամուտ ունենալով միասին, հազիւ եկեղեցի մը բաց կը պահեն անշօքէն ամէն պաշտօն պարտականութիւն ծանրաբեռնելով միակ քահանայի մը ուսին վրայ: Այս և ուրիշ շատ մը տեսակէտներով գովելի և օրինակելի է Գոնթանցայի հայ գաղութը: Գոնթանցայի միայն սա անսկէտով բաղդաւոր չէ եղած որ տեղւոյն հարուստներէն նշանակելի կրակ մը վայելէ որով իր պիտոնէին գէթ մէկ մասը ապահովուած ըլլայ: օրինակ, Յրէնկեաններու պէս մեծահարուստ վաճառականներ եթէ 10 15 տարի առաջ ազգին համար 8—10 հազար ֆր. հողի տուած ըլլային քաղաքին ո՞ր և է մէկ կողմը, տոյսօր անոր եկամուտովը կարելի պիտի ըլլար Ազգ. վարժարանին բոլոր ծախքը գոցել, որով նուիրատուն իր յիշատակն ալ յաւերժացուցած և նոր սերունդը երախտապարտ թողած պիտի լինէր:

ԲԱՅ ՆԱՄԱԿ

Պատասխան մը Պ. Ա. Յակոբեանին Պարոն:

Շուտով հրատարակող «Երկրորդ» թիվը 1910 Դեկտ. 24 թ 2-րդ համարին մէջ, ասպարէզ կը կարդաք ինձ հաստատելու, որ դուք Պաշտօնական չէք գիտեր:

Զը պիտի գլխաւորէ երբեք պատասխանել ձեր յարակիցող Պարոնին, այդօրինակ գրեցիք ձեր կը վերադառնա՞ որովհետեւ ինձի համար լրագրական բարոյական սարձրութեան զէմ մեղադրում, տուածային արժանապատեցումն ու արարական քաղաքականութեան պակաս ու եղած քննադատութեան մը զէմ օրինաւորապէս ու փաստացի կերպով պատասխանելու անկարողութիւն կը նշանակէ անհրաժեշտ ծագում ունեցող և այն կոչել հայ քննադատ «Բ», որ երբ հայ մանկագիր զատարակութեան սիրտն իրարայկան պարտաւորութեան մ'առաջ ստիպուած է, ինչպէս անցեալ տարի նոյնպէս վերջերս հայ վրժ. հոգաբարձութեան ու թագականութեան առջև լայնատարակութեան հաստատելու, որ Պ. Ա. Յակոբեան իբրեւ հայերէնի ուսուցիչ բուխարովին անկարող է:

Իմ այս գիտութիւններս կրկնեցի ձեր ինչպէս նաև Պ Էնթերթօրին երբ Դեկտ. 13 ին զ'ս վարժ սրան հրաւիրած էր բացատրութիւն պատահելու ինձմէ, աւելցնելով նաև որ դուք ոչ միայն հայերէն այլ նոյն իսկ ուսուցչէ մը պատահելի պակասութիւն իսկ չէք գիտեր:

Հոս չեմ սիրեր խօսիլ ձեր անօրինակ տաճկերէնի մասին, որովհետեւ մեզ համար զուրկ է կարեւորութեան:

Ձեր կոչին մէջ հայերէնի մասին ու է յիշատակութիւն չէք ընել, մինչդեռ մեր պարզութեան աւելի հայերէնի համար էր և գուցէ լեւոյն խոստովանել կուզէք ձեր անկարողութիւնը հայերէնի մէջ:

Արդեւ իրականացող միտքով հաստատած ըլլաւ ձեր հայերէն ու պարսկերէն չը գիտայի. ի ստորեւ կը գնեմ ձեր օրինաւոր Զ. Թաւադարի գրեցած հայերէն և պարսկերէն պաշտօնագրէն մի քանի հաստատումներ:

Ձեր խմբագրած պաշտօնագրի հայերէնին մէջ «Այսօր զիս լսեցինք» և այլն» կը գրէք. իսկ նոյն պաշտօնագրի պարսկերէն թարգմանութեան մէջ «Այսօր մինչև կէս օր ինձ ներկայացուցէք» կը գրէք:

Ձեմ գիտեք կղզի արդեւ որչափ տարբերութիւն կայ «զիս լսեցինք» ին ու «մինչև ներկայացուցէք» ին մէջ, դուք այդ տարբերութիւնը այնչափ մեծ չէ՞, որչափ մեծ է ձեր ազ. տուութիւնը հայերէն լեզուի մէջ:

Մենք չենք պատահել, որ ձեր Պաշտ. թարգմանութիւնը բառացի բլրար. որովհետեւ գիտեմք, որ ամէն լեզու իր մասնաւոր բնորոշ ոճն ունի, բայց իմաստի տարբերութեան, չենք հասկնար:

Եթէ քաջութիւնն ունենաք պնդելու, որ ձեր խմբագրած հայերէնը ճիշդ է ու պարզութեանը պիտի, ուրիշն պիտի ստիպուիք խոստովանել, որ պարսկերէն չէք գիտեր. իսկ եթէ պարսկերէնը ճիշդ է ու հայերէնը սխալ, ցաւօք պիտի կրկնեք որ հայերէն չէք գիտեր. իսկ եթէ պիտի պնդէք որ երկուքն ալ ճիշդ են նկատուի միայն իր թարգմանութիւն մը: Այն, այն ատեն պիտի ստիպուիք հրապարակել զգալի ձեզ որ երկու լեզուներն ալ կանոնաւորապէս չէք գիտեր իբր ուսուցչէ: Իսկ եթէ իբր արդարացում զիս սխալեմ չ'ըմտեք:

ցոյց տու ձեր այդ սխալները, այն ատեն գիտնալու էք, որ անոնք իրենց տեսակին ու քանակին մէջ միմիակերպ են. ձեր ամէն հայերէն գրութիւնները ինչն սխալներով և եթէ փափաքող էք կրնաք զանաք ալ մասնաւոր չել:

Պ. Յակոբեան, գիտնալու էք, որ եթէ կրթական պաշտօնէի հանգամանքը չունենայիք, երբեք ձեր գրական փափկանկամութեան և լրջութեան զուրկ նամակին պատասխանելու ծանձրոյթը յանձն չը պիտի առնէի. քննադատութեան, քննադատութեան վախճաններէն չեմ, զի գիտեմ թէ անոնցմէ լոյս կը ծնի, սակայն ինձ համար պատշաճ չ'ըլլաւ դատելի չափով ձեզ պէս մէկու մը նկատ, որ քննադատութեան մը զէմ օրինաւորապէս պատասխանելու տեղ պարզապէս անգիտութիւնն պատկերէր կրթական, կրթի ազդեցութեան տակ գրիչ չարժէ:

Իսկ ես իբր անոնցմէ լոյս ուսուցման նախանձախնդիր մի հայ կատարեալ իրաւունք ունիմ հայ վրժ. կրթական հարցով զբաւուելու, երբ մասնաւոր դուք հայ վրժ. ուսուցչական մարմնի որոշման հակառակ, միայն ձեր կրթին ու քմահաճոյքին համար, հայերէն լեզուի դասերը կը խրախուժէք հայերէնի մէջ ձեր բաժնի ու կարող ուսուցչութիւն օրինաւոր Զարուհի Թաւադարի. դուք այդ դուք որ իբր հայ ուսուցչի ոչ թէ քերականութեան ու շարագրութեան այլ նայն իսկ դեռ հայերէն լեզուի տառերու կանոնաւոր ձայներու առաջնութիւնը չէք գիտեր, ու ձեր անկարողութիւնը չի յայտնուի մեր խեղճ կը նայիք, ձեր աւելի կարողութեան ու անմտօրէն կ'ըստպառնաք նոյն իսկ կատարականութեան ուսում վարժարանի զանէն դուք քաղաքի ձեր պակասութեան մասին լուրջութիւն պատկեր:

Պ. Յակոբեան, զանց կ'անեմ թուել ձեր թերութիւնները. սակայն կը դաւիմ որ Դեկտ. 12 ին կիրակի օրը, Աղզ. խորհրդարանի մէջ հոգաբարձութեան ու թագականութեան առջև Շուտովի հայց վարժարանը «Շատ թանկ» կոչելու աննախընթաց անպատկառութիւնը ունեցաք իբր հայ ուսուցչի և կը զարմանամ, որ Աղզ. պաշտօնական մարմինները ձեր այդ անօրինակ վերաբերման համար հարկ և դաժմանքներով չ'ընել, թէ ես իբր հայ պէտք եղած պատասխանը տուի ձեզի:

Պ. Յակոբեան, վերջին խօսք մ'ունիմ ձեզի ըսելով եթէ կ'ընդունէք, Ծանօթ գեղգ

Շուտով 8 յունվար 1814 Պետրոս Մովսէսեան

Կ Ո Վ Կ Ա Ս Ե Ա Ն Լ Ո Ւ Ե Ր

Վեհ. Իգորիւն Կաթողիկոս, մասնակցութեամբ, Ռուսիոյ Ներքին գործոց նախարարը Ն. Ս. Օժուրկին ուղղած էր հետևեալ նամակը:

«Նորին Սրբութիւն Էջմիածնի Պատրիարք, Ամենայն Հայոց Կաթողիկոս Մատթէոսին:

Ներքին գործերի Մինիստր № 10624 19 յուլ. 1911 թ. Պետերբուրգ

Ձեր Սրբութիւն Ռուսական պետութեան հայ-լուսաւորչական եկեղեցու վիճակի հետ մտադրեց ծանօթանալու համար ես համապատասխան գտաւ ուղարկել հայ լուսաւորչականութիւնը դաւանող վայրերը իմ առանձին յանձնարարութիւն:

Ներքին պաշտօնակա զաղտնի խորհրդական Պետրովին:

Իմ պարագր համարելով տեղեկացնել այդ մասին ձեր Սրբութեանը, պատու ունիմ խնդրել ձեզ, չ'ըլանալ կարգադրելու հայ-լուսաւորչական հոգեւոր վարչութեան ամեն կերպ աջակցել յիշեալ պաշտօնակաին, ձեր եղբ. կայ հաստատութիւնների և անձերի կողմից նրա տրուած յանձնարարութեան աջող կատարման համար:

Ընդունեցէք, ձեր Սրբութիւն, իմ յարգանքի և կատարեալ անձնութեան առնչութեան:

Ս. ՍՍՈՒՊՈՒՆ

Վեհ. Կաթողիկոսը այս նամակը բաւական յետոյ հրահանգ գրեց թէ Ռուսահայոց Առաջնորդները որ Բէլ-րովի պաշտօնին գործադրութեան համար իրենց կ'ունենան հարկ եղած դիւրութիւնները տան:

«Կովկասէն ևս հայեր սկսած են խուճախութեամբ գաղթել զէպի Ամերիկա, գրած չ'անելու համար»:

Ասոնց շատերը զուրկ են մեր այն կազմակերպութեանց, որոնց իբրեւ Սոսիալիստ և իբրեւ լեզուական գործած շահատակութեանց պատճառով հայ գործարանատէրները զգուշացան իրենց գործերը, որով ըստ բաւարարանները անդործ մնացին, օտար գործարաններու մէջ ալ չ'ընդունուեցան իբր խառնարաններ:

«Պետական Տուրմայի հայ անդամ Տ. Ստեփան Տէր-Աւետիքեանց ոտակաւորութեան կոչնագիր մը ստացեր է Տիգրիս հարցաքննչ դատաւորին ներկայանալու համար: Այս ալ իբր «Դաշնակցական» ամբաստանութեամբ է. բայց 5000 ռուբլի գրաւ տալով առ այժմ ազատ թողուած է ու իր դատը պիտի քննուի Նովոչիքոսքի մէջ նոյն ամբաստանութեամբ բանտարկուած հայերու դատին հետ, որոնց նախնական քննութիւնները աւարտած են դեկտ. 20-ին: Դատաւարութեան օրը տակաւին որոշ չէ»:

Ա Ս Տ Ի Ա Ն Տ Ի

Ապրուստը ինչու աղած է

Բարեկից քաղաքական գիտութեանց վարժարանի մէկ բաժնէն Մ. Տանիլ Զոյա նշանաւոր հրապարակախօսութիւն մը կատարեց ապրուստի ու զուրկութեան մասին «Բիւզանդիոն» հետեւեալ ուշադրաւ քաղաքական կ'ընէ այդ հրապարակախօսութեան:

«Ռուսական լեզուներու սղութիւնը, որ ամենէն աւելի փոքր դատաւարակին վերայ կ'ընեն, այն տեսակ պատճառներով զիս հանրութիւնը չի գիտեր կամ կ'անտեսէ: Ծանաղաւորութեանց վրայ կ'իյնան ընդհանրապէս իսկ չէ: Հունձքերու համար շատ զէշ տարի մը ելաւ 1910: Յոբեր, գիշերն ամառանդ գետնախնամը, մեծագույն աղքատեան մէկ քանի ամիսներէ ի վեր տիրող օդերու բացաւաբար խիստ անպատկառ վիճակէն: Քաղաքացիական կռիւներն աւելի քիչ էին և տարր արդիւնքն եղաւ գիշերու բնական բարձրացում մը, առանց շահագրգռութեան միջամտութեան: Ապագայ մը եթէ կ'աղէք սա է թէ գարին, հաճախ ու վարակեալ, որոնց արտադրութիւնը սուս փոքրեալ էր, գիշերու մեծ ելեկ մը չ'ունեցան: Ուրիշն մեծ յանցարարն աւելի է, որ քանիցս գործադուր ըրաւ յարմար եղանակին մէջ» Մ. Տանիլ Զոյա աւելի նշանակելով կ'իյնան ձեր կայ տաղանդաւոր պատճառներն և կ'ընէ թէ կայ ուրիշ շարժառիթ մը որ մէկ

քանի տարիներէ ի վեր հետզհետէ կը բարձրացնէ ընդհանրապէս գիշերը: Մ. Տանիլ Զոյա կը յարէ թէ այս միջոցին կ'տիրէ ժէ. դարուն վերջերս ելած տաղանդ: Այդ թուականին ոսկի և արծաթի մեծ արտադրութիւնն առաջ բերաւ փոխանակութեանց արժեքներուն անկում մը: Նոյնն է նաև հիմա, Ոսկիի համարաշխարհային արտադրութիւնը, 1873-1890 եղած էր 150 հազար թիւ տարեկան, իսկ 1900-1905 հասած է 500,000-ի և 1908-ին 635,000-ի: Հիմա ամէն տարի 2500 միլիոն ոսկեգում կ'իյնան հրապարակաւ: Սակեւ առաջ կուգայ մեծագույն սրժէքին անկումն և անդեղեղնութեամբ գնումն անհրաժեշտ քանակութեան յաւելումը: Թոյլակները գերախառնարար այնքան աւարգութեամբ չեն հետեւի այդ յառաջացումին, բայց հսկում մ'ունեն շարժման հետեւելու» (*)

ՄԵՆ ԲԱՐԵՐԱՐ ՄԸ

Մր. Քարնէկի նորագոյն բարեկրութիւնն է երկու միլիոն ոսկրի նուէր մը Ռուսիոյ գրեթէ Քարնէկի հաստատութեան, որ կրթական գրական, գիտական և ընկերաբանական մեծ շինարարութիւն մ'է և որուն համար Մր. Քարնէկի ցարդ հինգ միլիոն անգլիական ոսկի տուաւ: Իր բարեկրութեանց գումարը ցայսօր կը հասնի քառասուն միլիոն ոսկրի: Ստատուցում նաև մընչև հիմա նմանը չ'եստ: Նուաճ խոշորութեամբ ու կատարելութեամբ նուազեալ մը նուիրել Ուիլսոն իբրան դիտարանին (Քարնէկի հաստատութեան) Սոյն դիտարանի աստղաբանները ցայսօր երեան բերած են վաթսու հազար նոր աստղեր, և որովհետեւ նոր հետազոտի աստղեր խոշորութեանը պիտի ունենան, շատ աւելի խորունկ պիտի թափանցեն երկնային կառարին խորութեանց մէջ, և անհամար նոր աստղեր գտնուելու պիտի օգնեն:

«Բիւզանդիոն»

Ա Ղ Բ Ա Տ Ա Խ Ն Ա Մ Ի

Հ Ա Ն Դ Ա Ն Ա Ի Ո Ի Խ Ի Ե Ի

Նախորդ թիւին Գումարը 224 50 Լէւոն Երկանեան Գումարի Պէնեան Երբութիւն Սրբաւոր Պաղոս Գալէմ ճեան Թագետա Տ. Յակոբեան Աւետիքեան Պարոն. Պարոնեան Աւետիք Մանուկեան Հանր Օղուեան եղբ. Երբութիւն Ճերմակեան Միհրան Սարգիս Ռեզուս Պողոսեան Մարտիրոս Երբութեանեան Թովմաս Սէմիքեան Վարդան Կիլիսեանեան Սարգիս Թորոսեան Արտաշ Մամիկոնեան Կարապետ Համաճեան Կարապետ Պանճէկեան Արշակ Մարտիրոս Կարապետ Մանուկեան Գրիգոր Սրբիկեան Մ. Կրպտ. Մուրադեան մէկական ֆրանք Նիկողոս Սարգիսեան Կրպտ. Կիլիսեան Վարդան Ռաիկեան Երբութա Տիգրան Տաղեան Լէւոն Երբութեան Նաւում Սարգիս Կիրակոսեան Երբութի Կիլիսեան Հրանդ Ճիւղեան Տիւմալէկէ:

(*) Դիւ. «Բիւզանդիոն» Բաթէսէօրին այդ բացատրութեանը որոշապէս կը հետեւի, թէ տարուէ տարուս կրկն և արծաթին քանակութիւնը պէտքէն աւելի շատանալուն համար դրամին արժէքը կը փոքրանայ այնպէս որ 10 տարի տաղան 1 մէկ ֆրանքը այսօր կէս ֆրանքի դարձ կը տեսնուի ոչ թէ անուշը սղածէ, այլ դրամը արժանացած է պէտք է բաւել:

ևան Սեպուհ Սահակեան Աբէլ Աբէլեան
Պողոս Մկրտչեան Սիմոն Թաթևեան
Յովհաննէս Վարդան Յարութիւն Պէր-
պէր յիսուսական ստեթիմ
Գումար 256 ֆրանք.

Գանձանակէ Գոյացած հասոյթ	
Հոկտ. 4ին	20
» 11ին	21.50
» 18ին	14.80
» 23ին	21.80
Նոյմ. 1ին	18.
» 8ին	21.60
» 15ին	21.
» 22ին	21.21
» 28ին	19.50
Դեկ 6-ին	20
» 12-ին	22
	219.40

Նուէրներէ Գոյացած Հասոյթ	
Զօրաբ. Թէրզեան ամուսն. 1. ֆր.	
Պալլաք. Յակոբէ կնքահայրութեան 1.	
Համբար. Աղամեան մկրտութեան 1.	
Բարսեղ Սիւզմէկեանէ կնքահայր 2.	
Երուանդ Չիլիկեանէ մկրտ. 1.	
Յարութիւն Սիսակեանէ կնքահայր 1.	
Փիլիպոս Հալաճեան Անուան 2.	
Սարգիս Պօյաճեանէ կնքահայր 1.	
Կրպտ Դանիէլեանէ մկրտութեան 1.	
Աբրահամ Կարապետեանէ Անուան 5.	
Լեւոնէ մկրտութեան 30.	
Փիլիպոս Հալաճեանէ կնքահայր 2.	
Տիգրան Չաքրեանէ ամուսն. 2.	
Օհան Կէ Տօնեանէ Ճամբորդութ. 2.	
Ալէքսան Արսլանեանէ 30.	
	23

Ի Դիմաց Աղք. Ընկ.
Դորձադիր Ժողովոյ
Ատենադպիր Ատենապետ
Ա. Զարպիսեան Յ. Կեօղիւպիլեկեան

Տ Ե Ղ Ա Կ Ա Ն

Կ'իմանանք թէ համարադրութիւն մը
կը պտըտի մողովութիւն մէջ Տէր Մար-
տիրոս հայրը կրկին պաշտօնի կոչուե-
լաւ: Կը գործունէնք այդ գործին
նախաձեռնողներու խորհրդակցին
վրայ:

Նոյն թէ այդ քանանա զուտամոծ,
հիւանդոտ մէկն է և զուրկ է ինչ ինչ
բաղձալի յատկութիւններէ: Դորձք կը
փնտռուին գէթ ասկէ յետոյ հայ քա-
հանայի մը վրայ օտար գաղթավայրե-
րու մէջ, երկրորդ՝ որ Տէր Մարտիրոս
հայրը հանգիստի պէտք ունի և ապ-
րուստի գոտարութեան զերծ է, եր-
րորդ՝ Թաղ. Խորհուրդը անոր որոշ
թուակ մը ստանալով է: Եւ կը վճարէ
ամէն ամիս, իր իսկ համաձայնութե-
ամբը, չորրորդ՝ որ անգլոյս եկեղեցին
արդէն ունենալով ուրիշ երկու քա-
հանաներ, պէտք չկայ երրորդի մըն
ալ:

Իրաց այս վիճակին մէջ Տէր Մար-
տիրոսի մը խնդիր հանել և զուտամոծ,
սպառած ու հիւանդակա ծերուկ մը
հոս հոն վազել ստիպել լուրջ մտքի
գործ չենք նկատեր, և չենք ալ կար-
ծեր որ այդ հանրագործութիւնը ընդու-
նելութիւն գտնէ մողովութիւն լուրջ
դատակարարին առջև: Դեռ երէկ կը
խօսուէր, թէ Ս. Երանգեան առթիւ
ընտարու արձաթանութեան մղեալ
և ալլաւ իր իրաւասութեան սահմա-
նէն դուրս ըլլալով հանդերձ, քանի
մը ընտանիքի տունօրէններէ պտըտած
տտեն, հարկ եղած է որ անոր ուսե-
րէն մտնելով սանդուխտէն վեր ա

ռաջնորդէն: Չեն մեղքանար այդ ծե-
րունիին, զինք չառ սիրողները—թէ և
նիւթապէս հոգացողի պէտք չունի ան-
կրնան իրենց մասնաւոր նուէրները
ղրկել:

—Ի լրոյ կ'իմանանք, թէ Թաղ.
Խորհուրդը տեսնելով իր Ժողովրդա-
կանութենէ զրկուած և եկեղեցւոյ հա-
սոյթներուն պակասը ըլլալը, որով
նիւթապէս անձկութեան մէջ կը տա-
ռապի, մտադրած է հրաժարիլ: Մենք
կը բաղձանք որ ներկայ Թաղ. Խոր-
հուրդը չի հրաժարի, այլ ուղղուի:
Այժմ անոր հրաժարիլը մեզ սա եր-
կիւղը ազդէ որ ժամանակ մը ազգա-
յի գործերը բողոքովին անիշխանու-
թեան մատնուին և անպատասխանա-
տու եռուտանի մը ձեռքը խաղալիք
դառնան, որով Աղք. Վարժարանի
կոնստանտնուրթիւն ալ խանգարի վճար-
մանց անկանոնութեան պատճա-
ռաւ:

Մենք Գրկայիս կը կրկնենք մեր
նախորդ թուով տուած խորհուրդը,
թէ Թաղ. Խորհուրդը պէտք չէ հրա-
ժարի, այլ իր մօտ հրաւիրէ անցեալ
դէպքերէն իր վշտացուցած ժողովուր-
դը ու իր մաս մը համակիրները. և
անոնց բացատրէ գործերու վիճակը ու
դարձան և աշակցութիւն խնդրէ ի
սէր կրթական գործին:

Ա Ձ Գ Ա Յ Ի Ն

Դուրեան Ս. Պատրիարքին առ
Դատական և Կրօնական գործոց
նախարարն ուղղած հրաժարագ-
րին թարգմանութիւնը:

«Նկատելով ու կարողութենէս
վեր է պէտք եղածին պէս չարու-
նակել աղօթիչըս յանձնուած և
Պոլսոյ ու անսր իրաւասութեան
ենթակայ թեմերուն Պատրիար-
քութեան վերաբերող պարտա-
կանութեանց կիրառումը, կը
փութամ ծանուցանել թէ աղ-
թողիս բացարձակ հրաժարականը
նախապէս տուած եմ: Պատրիար-
քօրանի Ընդհ. Ժողովին, կը խնդ-
րեմ որ քարեհաճիք շնորհ ընել
զիս արձակելու վերաբերեալ Պատ-
րիարքութեանէս:

Եղիշէ Եպիսկ. Դուրեան
—Մարաշի երեք Հայ հառա-
բակութիւններու հոգևոր հովիւ-
ները հաւաքութեամբ մը զրկե-
լով Աղք. Պատրիարքարան, Մա-
րաշի աղէտեալ և անկեալ վի-
ճակը պարզաւ և անոր տնտեսա-
պէս վերականգմուն համար մի-
ջոցներ ցոյց տուած են: Նախ
կերպասներ գործելու համար
250թ չփ տէսկեահներ չիւնել
երկրորդ մանածի գործարան մը
հիմնել, քանի որ տեղէնքաձակ
կարտագրուի և կտաւագործու-
թիւնը (Լանխա, չալ ևն) Մարաշ-
ցւոյ արհեստն է արդէն: Բայց
այս բարոյին համար 5—6000 ոս-
կիի կը կարօտին: Ուստի նոյն
հիգևոր հովիւները հաւաքաբար
կառավարութեան ալ դիմած են,
հարկ եղած դրամագլուխը խնդ-
րելով Յօշոդութեան ամէն հա-
ւականութիւն ունի Մարաշցիւն
րու ծրագիրով, բայց ո՛ր է այն
կառավարութիւնը որ աշակցի

երկրին իրական դարգացման:

—Աղք. անուէր Հոյուհեաց րկե-
րութեան տալիք մեծ պարա-
հանդէսին հովանաւո, ութիւնը
ստանձնած է կայսերազուն իշխան
Մէճիտ էֆ. Այդ առթիւ իրեն
ներկայացող հայ տիկիներուն
իշխանը սա գեղեցիկ խօսքերը
արտասանած է:

Այսպիսի բարենպաստ գործի մը
համար պատրաստ եմ իմ աշակցու-
թիւնս ընձեռել: Կրթութիւնը: մանա-
ւանդ աղջիկներու կրթութիւնն ա՛յն-
չափ անհրաժեշտ ու ստիպողական է
մեր երկրին համար, որ, եթէ դուք
յոգնութիւն առնելով մինչև հոս եկած
չըլլալիք իսկ և պարզ հրաւեր մը ուղ-
ղէիք, դարձեալ սիրալոյսով պիտի ըն-
դունէի զայն: Ձեր ըրածն ուրիշ բան
չէ, եթէ ոչ սա մանադրական կառա-
վարութեան գործը զերբացնել, պատ-
րաստելով ուսեալ ու դարգացած մայ-
րեր՝ որոնց ա՛յնչափ պէտք ունի մեր
երկրի:

«Ձեր գործն երկրին համար մեծ է
ու նուիրական: Դաւառական 33 դըպ-
րոցներու համար մէյմէկ ոսկինոց տոմ-
սակներով գոյացած հասոյթը չի կրնար
բաւական նկատուիլ: պէտք է ամենքս
ձեռք ձեռքի տուած ջանա՛ք ա՛լ ա-
ւելի արդիւնաւորել այս պարահան-
դէսը, հետեւաբար կրնաք վստահ ըլլալ
որ իմ ամէն միջոցներս պիտի գործա-
դրեմ մեր բոլոր ունեւոր դասակար-
գին հեշուն աշակցութիւնը բերելու
ձեր 33 դպրոցներուն մէջ դաստիարակ
ուող ապագայ մայրերու համար»:

Պատգամաւորութիւնը խորին
շնորհակալութիւն յայտնելով հը-
րաժեշտ առած է:

—Մենք ԿՏԱԿ ՄԸ.—Տփլիսէն
մշակի խմբագիրը հեռագրած է
պատրիարքարան թէ նոյն քս
ղաքին մէջ վիճակներ է Տիկին
Թամար Դուկասեան, որ մէկուկէս
միլիոն րուպլի (մօտ 4 միլիոն ֆր.)
կը կտակէ պատրիարքարանի,
որպէսզի իր հօրը՝ Աւետիսի յի
շատակին համար թուրքիոյ մէջ
համալսարան մը բացուի:

Կը ժողթենք որ կատարելապէս
ճիշտ ըլլայ այս աւետիսը և սյդ
կտակը Եուսեանէ քուի կտակին քրիս-
իկին չը գայ ի շնորհօ, Եսհրիկ
եաններու և Բասմալեաններու:

—Մուշի առաջնորդը կը հե-
ռագրէ պատրիարքարան, թէ
Աղք. վարժարաններու կրթու-
թեան նպաստը գանձելու նպա-
տակաւ գիւղերը զրկուած պատու
իրականները դէռ բանտը կը մնան
ոմանքիբր քաղաքական յանցա-
ւորներ: Ուսուցիչներու թուակը
չը վճարուելուն պատճառաւ ոմա՛ք
մարտասօ՛ն չեն յաճուեր: Ոճ...

գործներ և գողեր ազատ կը պը-
տըտին, մինչ կրթական գործին
աշխատողներ կը ձերբակալուին
և այլն: Բայց մենք ինչպէս որ տե-
ղեկացած ենք ուսնց բանտար-
կութիւնը առանց պատճառի չէ.
անոնք ալ աղքատ գիւղացիէն
«կրթական տուրք» գանձելու հա-
մար եէնիշէրիական բռնութիւն-
ներ ի գոյժ գրած են: Խեղճ հայ
գիւղացիներուն բողոքի ազդակը
անցեալ տարուրէն ի վեր բոլոր
աշխարհ Կարձապանդէր: Եթեք
ալ չենք դիմանար այս հայ կե-
ղեքիչներու անխղճութեանց, ա-
նոնք թուրք և քիւրտ եէնիշէ-
րիներէն աւելի զսլիմ են: Եթէ
ճար մը չըլլայ այս վիճակին,
տուհ, հող ձգել փոխիլ պիտի
ստիպուինք» կըսէին իրենց բողո-
քագրին մէջ: Խորախանեան ե-
պիսկոպոս այն ատեն իսլու չը
սեց այս բողոքները և ապարէզ
ուուաւ: Չաւարեանի մարգար, Գարմէնի և Մարգարեանի պէս
փոխակէրներու որ ուղղանին խա-
ղան Տարօնի գեղջուկներու տա-
ւարախոյ գլխուն:

—Ատան յի վշտակիր առաջ-
նորդը, Դե. Տէր Մուշեղ եպիս-
կոպոս, որ Կիլիկիոյ ծանօթ ա
աղէտէն ի վեր յաստանդական ե-
լած և վերջեր Ամերիկա դացած
է, հոն դիւթիւղ տպաւորութիւն
մը կը թողու հայ գաղթականու-
թեանց վրայ, իր պիւճ քարոզ-
ներով և հմտալից բանախօսու-
թիւններով, նորին սրբազնու-
թիւնը իրեն նպատակակէտ ընդ-
րած ըլլալ կը թուի, Ամերիկայի
հայութիւնը սթափեցնել օտար
և վերացական մտքերու անձնա-
տուութենէն զանոնք համախմբել
Հայ Բարեգ. Ընդհ. Միութեան և
Ռամկավար Սահմանադր. կուսակ-
ցութեան շուրջ կար և յաջողու-
թիւն կը ժողթենք իրեն, որ
գիտցած է իր ներկայ տարագրու-
թիւնը օգտակար ընծայել հայ
ազգին յուսատու և լուսատու այդ-
երկու ջահերուն:

ՎԵՀ. ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՄԱՀԸ

Բանդիշ խմբակի կողմէի Հու-
րիզուն օռհանին սա տողերը ուղ-
ղած է Մշակ:

Դուք և ձեր ընկերներ հորի-
զօականները չէք խղճահարուիր
և չեք կայացուցէ եռ գրեթէ իմ-

ՏՊԱՐԱՆ «ԻՐԱՆԻԱՆԷՔ»

ԿԸ ՏՊԱՐԱՆԻՆ ՄԱՐԹՈՒՐ ԵՒ ԶԱՓԱՌՈՒ ԳՐԱԴԱՐԱՆ

ՀԱՐԱՄԱՆԵԿԱՆ ՀՐԱԽԻՐԱԳԻՐ, Այցատու, Նամակագրութիւն, Պահաւան
Պարսամուրհակ, Հաւուերուղբեր և ուրիշ գործեր

Հայերէն, Պոռնկարերէն, Յրախոսերէն և Ռումաներէն

Մեզ դիմողներու ճաշակին գոհացում տալու համար Տպարանս նոր
բերել տուած է ամէնամկերքի սիստէմի
գործիքներ և տառեր

ՅԱՆԶԱՐԱՐԱՐՈՒԹԻՒՆԷ ԿԸՆԴՈՒՆՈՒՆ ԿԱՆԽԱՎԱԾԱՐԱՎ ՄԸ

